Աջակցություն Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակին

Ընդհանուր տեղեկատվություն

Ոլորտ՝	Մարդու իրավունքներ ու օրենքի գերակայություն
Տևողություն՝	19 ամիս
Իրականացման ժամանակահատված՝	Հոկտեմբեր 2009 - Մայիս 2011
Բյուջե՝	EUR 1 մլն

Շահառու մարմին՝ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակ

ԵՄ անդամ պետության գործընկեր՝ Առաջատար գործընկեր՝ Le Mediateur de la Republique, France
Կրտսեր գործընկեր՝ Defensor Del Pubelo, Spain

Ծրագրի նկարագիր

Նպատակ. Աջակցել Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի տեխնիկական ու կազմակերպական կարողություններին պաշտպանել ու խթանել մարդու իրավունքները և հիմնարար ազատությունները՝ որպես անկախ ազգային մարդու իրավունքների մարմին՝ ամբողջությամբ համապատասխան ազգային մարդու իրավունքների մարմնի Փարիզի սկզբունքներին:

Բաղադրիչներ. **Բաղադրիչ I:** Շարունակական աջակցություն ինստիտուցիոնալ զարգացմանը
Բաղադրիչ II: Մարդկային ռեսուրսների հզորացում
Բաղադրիչ III: Մարդու իրավունքների պաշտպանության ու մարդու իրավունքների պաշտպանի մասին իրազեկության բարձրացում

Հեռանկարային արդյունքներ. Ծրագիրն ընդհանուր առմամբ հասել է նախատեսված արդյունքներին.
Ա)Բարձրացվել է Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի ու նրա դերի մասին հանրային իրազեկությունը;
Բ)Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի ներքին ընթացակարգերն ու աշխատանքային տեխնոլոգիաները բարելավվել են, աշխատակազմը վերապատրաստվել է ԵՄ լավագույն փորձի վերաբերյալ;
Գ)Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի ու տեղական ոչ կառավարական կազմակերպությունների միջև հաստատվել են լավ համագործակցային հարաբերություններ;

Դ)2011 թվականին մշակվել ու Մարդու իրավունքների պաշտպանի կողմից հաստատվել է ռազմավարական զարգացման ծրագիրը Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի վեցամյա զարգացման ռազմավարության հետ միասին;
Ե) Մարդու իրավունքների պաշտպանի մասին օրենքը բարեփոխվել է՝ միջազգային լավագույն փորձի ու ծրագրի շրջանակներում ձևավորված առաջարկությունների հիման վրա։

Հավելյալ տեղեկատվություն.